1

# ԼՐՈՅ ԳԻՐ
# ՄԵԾԻ ՏԷՐՈՒԹԵԱՆՆ ՕՍՄԱՆԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԱՄ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ — ՆՈՒՄԻՐ 24

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1832 ՄԱՅԻՍԻ 2. ՈՐ Է 1247 ԶԻԼՀԻՃՃԷԻ 1.

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ.

## ԳՈՐԾՈՑ ՆԵՐՔԻՆ

Հաւատարիմ սէրասքէր Մուհամմէտ Խիւսրէվ փաշային զօրմանէ բարեկաւը Խնչնաւզլին մատուցած շնորհակալութեան գրին ձանաչը գրեալ՝ Թագաւոր Թագաւորին որթոնէ հրամանագրին օրինակն է.

Դու որ բոլոր կարգադրեալ զօրականներուս քաջազօր սպարապետ Մուհամմէտ Խիւսրէվ փաշայն ես. այս մեր Թագաւորական հարկաւոր և պիտանի գործքերէն եղած արքունի քաջայաղթ բանակիս վրայօք՝ գրով ծանուցած այս հաւատարմական յաջողութեանդ նայելով վերահասու եղեր եմ: Քո մինչև հիմա տէրութեան կողմը ցոյց տուած ուղղութիւնդ և հաւատարմութիւնդ՝ Ինքնակալութեան հաճոյ և ընդունելի եղած է.

Սատի բոլոր կարգադրեալ Թագաւորական մեծ և փոքր զօրավարներուս և զօրքերուս զատ զատ պատիւներն և վարկունքն՝ տէրութեան քովը ընդունելի ըլլալով, անոնց հրամանատարութիւն և կառավարութիւն և սպարապետութիւնը քո արժանաւորութեանդ յանձնեցի: Դու ալ կրուի այս բարի գործքիս մէջը չափաղանց աշխատելով, անքնական հրամանիս կերպովը կարգադրեալ բանակիս բովանդակ պիտոյքները և հարկաւոր զէնքերը կամոց յարմար խնամլու բարեկարգել արժանացիր:

Եւ յաջողութեան բարձրելոյն ով՝ արքունի և մանսուրէ զօրքերս ալ բարեհաճութեամբ համեմատ ծառայութիւն ընելով, դու և բոլոր կարգադրեալ զօրքերս Թագաւորական օրհնութեան արժանի ըլլալնուդ՝ ի զատ, կերպ կերպ արքայական վարձատրութեան ալ նաև արժանի պիտի ըլլան:

Սատի բարձրեալն տէր մեր և մեծի տէրութեան օգտակար գործքերուն բարի յաջողութիւն և դիւրին եղանակաւ կատարում պարգևեսցէ, ամէն: Եւ այժմ բոլորն ալ ան ով խնդ յանձնեցի:

Յիշեալ Սպարապետին յաջողութեան օրինակն է:

Մեծափառ Թագաւորական հովանաւորութեանդ ներքև այս նուաստ ծառայ-

ժա

նէր. անպարտելութեան աշխարհակալ մեծի տէրութեանդ կարգեալ ըլլալով, իմ ծառայական պարտաւորութեանս այս անգամ Ստամպօլու կողմն երկրած Թագաւորական երթեալ և կարգադրեալ զօրքերուն վերայօք՝ արքայական Նուանէղ ծառայական յայտարարութիւնս է։

Ողորմութեան և գթութեան ոչ և բարի ձանացողութեան աշխարհակալ նման զօրաւոր Ինքնակալիդ, և յաջողութեան յաւիտենականին յայտնի եղած հետզհետէ պատրաստութիւն և բարեկարգութիւն կրթեալ զօրքերուն օգուտը և պիտանաւորութիւնը Վեհափառութեանդ ծանուցեալ է։

Եւ յիրաւի երկար ժամանակի կարօտ ստանալ մեկ մեծ գործքին շուտով կատարվիլը՝ մի միայն արքայական բարի ձանացողութեանդ ըլլալը՝ արեգական պէս կերեւի։

Իսկ արդ՝ Բուլկէրի, և Ստամպօլու քաղաքներուն, և անոնց ծովեզերքը եղող Թագաւորական անուր բերդերուն, և անոնց մէջը գտնուող բնակիչներուն հանգստութեան և կարգադրութեան պահպանելու համար, հարկաւոր տեղերնիս կարգեալ բաւական հետեւակ և ձիաւոր [illegible] կրթեալ զօրքերէն 'ի զատ, այս անգամ յաջողութեան ոչ Ստամպօլու ընդհանուր հրամանատար ծառայնուդ հետը գտնուելու համար՝ Քերիզ ի մնացուրք ակելեր ակելի, և արքունի և մնացուրք զօրաց դաստիարակ փաշայներ ծառայներուդ՝ իրենց կառավարութեան ներքևը եղողներուն՝ թէ Քերիզի խասսա Սէհմ փաշայ ծառայնիդ, և թէ նուասա ծառայիդ կողմանէ զատ կարգադրութիւնները՝ հզօր տէրութեանդ նեցկայութեանը յայտնի եղաւ։

Եւ նոյն կերպովը՝ Պէօլթաւէայի, և Կօնեայի, և Հալէպի Չամլեանները գտնուող խրրկեալ արքունի և մնացուրք հետեւակ և ձիաւոր զօրքերուն հետը՝ 150 ջարխայ Թնդանօթներ, և 18 չափէն մինչ 21 չափ եղող՝ 30 են աւելի պաշարելու Թնդանօթներ, և կրթեալ և կատարեալ Թօփճիի գունդեր, և լաղըմճիի և պալթաճիի Թափօրներ, և շատ վարպետ երկրաչափներ, և ուրիշ պաշտօնատարներ, Իսկ նակալիդ հզօր կարողութեամբ՝ բոլորը 60 հազարէն աւելի ըլլալը յայտնի է։

Եւ յառաջմանէ Ստամպօլի կողմը խըրկըւած առաջին դաստիարակութեանս հետը գտնուող՝ Թօփճիի, և խումպարաճիի, և լաղըմճիի, և պալթաճիի Թափօրներէն 'ի զատ, այս անգամ խըրկըւած միջեալ արքունի և մնացուրք զօրքերուն՝ այժմ Վօն եային դաշտը գումարվելնին սահմանվեցաւ. որ անկէց ընդհանուր հրամանատար ծառայնիդ՝ ժամանակին բերմունքին և հարկաւորութեանը և սահմանադրեալ կերպին նայելով, թէ և թէ եղած բանակներուն բաժնելով, հարկաւոր եղած տեղերուն մեկնելու եանէ կարգադրութեան կերպով պիտի ուղարկէ։

Եւ արքունի և մնացուրք զօրքերուդ պարգև եղած տեսակ տեսակ զէնքերը, և գործիքները, և գրաստները, և ուրիշ պատերազմական պիտոյքները, մեծ առատ Թագաւորական հովանաւորութեանդ ամենեն նալ անձամբ և նոր և ընտիր ըլլալէն 'ի զատ, պատերազմական կանոնին կերպովը հետզհետէ խըրկըւելու հարկաւոր եղած Թընդանօթներու [illegible] կահ կարասիքը, ողորմութեան ոչ շուտով հասցընելու համար պատրաստուի տեսնըւելը է։

Եւ կարգաւորել զօրքերուն անցնելու կողմերուն բնակիչներուն և ռէայներուն՝ որ բարեգութ Թագաւորական հովանաւորութեանդ հովանաւորեալ են, ամենեւին անոնց նեղութի չտալով՝ թէ կեանքերնին և թէ ստացվածքնին պահպանելով, հետաւոր երկիրները բնակողներն ալ՝ բարեկարգեալ և կրթեալ զօրքերուն կերպ կերպ առաքինութիւնները աչքով տեսնալնին՝ Թագաւորական կամքը ըլլալը, ծառայնիդ տեղեակ և վերահասու եղած է։

Ուստի արքայական բարի կամեցողութիւնքդ ամենեն կողմանէ ալ կատարվելու հարկ եղած կերպովը՝ ջանք և աշխատանք եղած է։

Եւ զօրքերուն ռօճիկներուն՝ ամեն տեղ տեսակ տեսակ բաւական պաշարներ գտնվելու համար՝ պէտք եղած քանիսի տեղեր ամբարներ պատրաստվելը և յառա-

կայեր է. և ժամանակին ժողվըված կերպ կերպ զաւհրեները ամպարները լեցնելով, ողորմութեան ու Թագաւորական զօրքերուդ երթալու հեռաւոր ճամբաներուն մէջն ալ ամենևին նեղութի և կարօտութի չըքաշելնին յայտնի է: Նաև եթէ հարկաւոր ըլլայ, գաւառապետութիւններուն (լիվաներուն) և պալթաճի Թափօրներուն քովերը ծառայելու համար՝ պատերազմական գործիքներով երեք հազար մարդ պատրաստըված է. որ ասոնք ալ զօրաց կարգադրութե ներքևը ըլլալով, իրենց յատկացեալ պաշտօններուն մէջը ծառայութի ընեն.

Յիրաւի տէրութեդ նախնիքը առաջին Թագաւորները՝ կրթեալ զօրք հաստատելու և կարգադրելու կամք ընելնին Թէև յայտնի եղած է, անոնց այս բանը յաջողված չէ: Բայց յաւիտենականին պարգևօքը՝ միայն մեծազօր Տէրութեդ յատկացեալ ըլլալով հաստատուն և անխախտ սկզբնաւորութեդ մինչև հիմա ՚ի գործ դընելնիդ՝ մեծի Տէրութեանդ օգտակար ըլլալու աստիճանը հասած է.

Աստի քանի մը օրվան մէջ Թագաւորեալ քաղաքէդ վերյիշեալ կերպովը 60 հազարէն աւելի կարգադրեալ զօրքերը՝ առանց ձայնի երբ խըրկվեցաւ, բնակիչներուն շատը զօրք ելլալը չիմացաւ. և հասարակաց հանգստութիւը ամենևին չվրդովելը՝ միայն կրթեալ զօրաց գովելի սահմանադրութեն յառաջ եկած է.

Վասն որոյ առաջին անցեալ ժամանակներուն ոչխութը եթէ մտք բերվի, կրթեալ և կարգաւորեալ զօրքերուն յարգը և աստիճանը գեր՚ի վերոյ համարվելը հարկաւոր է:

Վասնզի յիշեալ զօրաց խըրկվելու օրերը երբ վրանին շըջահայեցութե նայվեցաւ, որ բոլորը մէկտեղ միաւորս և միաբերան բարձր ձայնիւ, Նորեքարդ արքայ շնիս ընդ երկայն աւուր մնասցէ ըսելով՝ սրտի մօք աղօթք ըրին, ամէն մէկ զօրականները իրենց սովրած պատերազմական արհեստովը ստացած նոր կարողութիւնին՝ Թագաւորական կենացդ համար ՚ի գործ դընել փափագելով, իրենց պաշտօններուն մէջը առաւել բաղձանք և ուրախութիւն ցոյց տալով, անձերնին չխնայելու պատրաստ եղան:

Նաև ահա այս կարգաւորեալ զօրքերուն հնազանդութիւը և հաւատարմութիւը քանիցս անգամ փորձըված ըլլալէն ՚ի զատ, այս անգամ Թագաւորական պահպանեալ քաղաքներուդ խիստ հեռաւոր կողմերը գընալու համար՝ արքայական հրամանիւներու մէջը ունեցած փափաքներնուն պատճառովը, նոյն կողմերը իրենց խիստ մօտ համարեցան. և դժվարին գործքերը յաջողութեան ու հեշտ և դիւրին գտնալով՝ իրենց երթալու ճամբային և պատերազմական նեղութիւներու մէջը՝ ամենևին ջանքէ և աշխատութէ չըԹուլնալով՝ արքայական բարի կամեցողութիդ՝ կատարեալ հնազանդութե ամէն կերպով կատարելու փոյթ ունեցան. Աստի իրենց պատիվը կրկին անգամ Տէրութեդ առջևը մեծցընելու, և տիեզերահռչակ բարի համբաւը հզօր տէրութեդ պահպանելու կարօղ ըլլալնին, մեծապայծ Տէրութեդ խնամելու համար՝ ահա իմ ծառայական յայտարարութիս մեծաւ խոնարհութե Արքայական ոտացդ հողին կըմատուցանեմ:

Այս ամէն կերպով կամք և հրամանը՝ վեհափառ և մեծազօր և ահաւոր՝ իմ բարերար և երախտաւոր տիեզերական Թագաւորիս է.

---

Բումպէյին մէկ քանի կողմերուն պատահած կերպովը, Սէլանիկի մէջն ալ ժամանակէմը ՚ի վեր անձրև չըգալով՝ ցորեանքը և արմտիքը նիհար մնացեր էին.

Աստի նոյն քաղաքին բնակիչները իրենց տեղերը աղօթք ընելէն յետոյ, ամենքը ՚ի միասին երեք օր առաւօտները մէկ զմէկու ետևէ քաղաքէն դուրս ելլալով՝ աղօթք և աղաչանք ըրեր են, և օգուտը չըլլալով յուսահատեր են:

Իսկ այն քաղաքին մէջը՝ Սէլանիկցի՝ մուսօղ Ալիւման ձէկի մէտրէսէսին դասատու՝ Նասօզուլի կոչմէն եկած և միշտ դիտուն պարապօղ 80 տարին անցուցած

ծերունի հաճի Մուստաֆա էֆէնտիին՝ մէկ առտուններըս գիշերը երազին մէջը Ինքնակալը կերեւի, և հրաման կընէ. որ նոյն քաղաքին Այասօֆէա ըսուած մզկիթին մէջը Թալիըմը քարեր կայ, անոնց վրայ կարդալով ջուրը ձգվի, և այնպէս աղօթք ըլլայ:

Երբ այս հաճի Մուստաֆան կարթննայ, նոյն քաղաքին բդեշխ իշխանաց իշխան Մէհէնէ փաշային կերթայ կըպատմէ: Նա իսկոյն վերոյիշեալ երազին կըրպովը կատարելունին, չորս օր և երեք գիշեր թէ նոյն քաղաքը՝ և թէ շրջակայ քաղաքները շարունակ այնքան անձրև կուգայ, որ մէկ քանիմը տարիէն մինչև հիմա և ժամանակին ալ այնպէս պատահիլը լսուած չէ. և այս բանըս ողորմութեան ու բարեգութ Ինքնակալին բարեպաշտութեան յառաջ գալը յայտնի է. և այս նշանաւոր բանը, մանաւանդ այս անձրևոյն պատճառաւ այս տարի այն կողմերուն առատութեան նշանը, և բոլոր բնակիչներուն Ալքային աղօթող և առաւել շնորհակալ ըլլալնին ծանուցանող յայտարար գրերը՝ թէ Սելանիկի դատաւորին, և թէ այն տեղի փաշային կողմանէ եկած են:

Երբ այս բանը Ինքնակալին իմացուցին, հաճի Մուստաֆա էֆէնտիին 5000 ղրշ ողքէյական պարգև տրուելու հրաման ըրաւ. և իսկոյն այն պարգևը՝ նոյն փաշային պատասխանի գրին հետը խրկուեցաւ:

---

Այն ժամանակի գիտուն նախարարներէն մեռնող Ալթըֆ էֆէնտիին թոռը՝ Սուլէյման Ֆէրիտ էֆէնտին որ յառաջմանէ Պուրսայի մօլլայ էր, անոր այս զլըդատէր ամսոյն 23 օրէն համարելով, նոյնպէս հին դատաւոր էֆէնտիներէն՝ նախկին Պուրսայի մօլլայ Խասթամպօլցի Դօմէր էֆէնտիին յիշեալ ամսոյն 25 օրէն համարելով, երկուքին ալ մէքքէի աստիճաններ ողքէյական պարգև տրուէր է:

---

Անցեալները Մէլէչէթրին գիւղաքաղաքին վրայ ձեռք երկնցնող Պօշնախի ապստամբները՝ և անոնց հետը միաբանեալ Լապ և Գուլագ ըսուած ապստամբները՝ որ ողորմութեան յաւիտենականին բոլորովին յաղթեալ ցիր և ցան եղած էին, ինչպէս տասն և իններորդ անգամ՝ տպուած Լրոյ գրին մէջը յիշուած էր. այս ապստամբները և թէ Պօսնայի կից եղեալ Ռալէ ըսուած Ժողովրդին ապստամբները, Պօշնախի ապստամբներու հետը միաբանեալ ըլլալնուն համար՝ նախ անոնց պատիժը տալ հարկաւոր ըլլալով՝ եպարքոսին յառակայեալ էր:

Վասն որոյ Փէրիշթինէյի կողմը եղող՝ նախկին Պօսնայի բդեշխ Իպրահիմ փաշային կողմանէ հրամանատար գրանըլօղ՝ իր եղբայրը իշխանաց իշխան Իօմէր փաշայն, և Իուսքիւպի բդեշխ Եէշար փաշայն, և մէկ կողմանէ ալ Իփէկի և Յագօվաի գիւղաքաղաքներուն միւսէլլիմները՝ Ալան փաշայն, և Սէյֆէտտին փաշայն, հրաման եղած զօրքերով գունդ գունդ ամէն կողմանէ այս ապստամբներուն վրայ խրկվեցան:

Եւ երբ պատերազմեցան, այս Լապ և Գուլագ ապստամբները չըկրցան դիմանալ, և մեղայ գոչելով թողութ խնդրեցին: Նմանապէս անոնց ետևէն Ռալէ ըսուած ապստամբներն ալ մեղայ գոչելնուն համար, անոնց ամէնուն ալ պատանդները (ռէհինները) առնըլելով՝ երաշխաւորութ կերպով հնազանդութ և հպատակութ ներքև մտած են:

Եւ ապստամբներուն մէկ քանի փախչողները բռնելու համար՝ Իվարնիկեցի Հիւսէյին փաշայն՝ Գուլագի կողմը, և Լիպօֆձեցի Իսմայիլ փաշայն՝ Պուրշունլուի կողմը, եպարքոսին կողմանէ հրամանատար խրկուեցան:

Եւ Փէրզէրինի բդեշխ Մահմուտ փաշայն ալ մինչև հիմա խրկած զօրքերէն ՚ի զատ, ինք ալ բաւական զօրքերով Պօսնայի բանին համար՝ այս անգամ դէպ՚ի Փէրիշթինէ գացած է:

Եւ Պօսնայի բդեշխ Համտի փաշայն ալ այս անգամ յաջողութ յաւիտենականին՝ մէջը դրուած կարգադրութիւնները

գործքով յառաջ կատարելու համար՝ Մանաւդը ըսված քաղաքէն ելլալով իր Հըրամանատարութէ կողմը գացած է ։ Այս որդ Պօնային բանին ալ քիչ ժամանակի մէջ գեղեցիկ վերջաւորութիւնը տրվիլը Ա̃յ կըխնդրըվի ։

—

Մեծարու գայմագամ Ահմէտ փաշային, և այժմեան Շէպինգարահիսարի և Մէնդեշէ գաւառներուն ըդեշէս՝ նախկին Եպարքոս Ռէուֆ փաշային, ասոնց գախուքէհեաեութէ պաշտօնները՝ որ նախկին արքունի Պարութխանէներուն նազըր Նէճիպ էֆէնտիին վրայն էր, այժմ Խազնաւորին հրամանով անկեց առնըվելով, Գայմագամ փաշային գախու քեհեաեութէ պաշտօնը՝ նոյն փաշային գանձապետ Խօճաէկեան համի Հիւսէյին Հիւսամ էֆէնտիին տրվեցաւ. և Ռէուֆ փաշային գախու քեհեաեութեան պաշտօնն ալ այժմեան Պալաթայու նազըր՝ Սալիմ պէկին յանձնըվեցաւ. և երկուքին ալ խիլաթ հագուցին ։

—

Անցեալ շէպաթին 16 ին՝ իրիկվան ատենը Սօֆիա քաղաքին մէջը՝ Մուսղուրլէր չարշըսի ըսված տեղը՝ ձիապանիմը ախոռէն փորձուքէ պատահած կըրակէն՝ 31 խանութ, և 5 սըրձանոց ունեցող փայտաշէն խանմը, և մէկ հացագործի փուռմը, և 6 ձիապանի ախոռ, և մէկ տաճկի տուն, և 7 հրեի տուն այրըվերեն ։

Նու յիշուած այն տեղի բոլոր շինվածները՝ փայտաշէն և խիստ հին էր. և մանաւանդ այն քաղաքին մէջը առանց կըրակ հազիւ պատահած էր. և կըրակ մարելու գործիք և թուլումպա չըլլալէն ՚ի զատ, այն կըրակին ատենը ջուրն ալ քիչ գըտնըվելով՝ Ա̃ծ մի՛ արասցէ նոյն քաղաքին բոլորովին այրելուն կարծիքը այն տեղի բընակիչներուն միտքը կըտանջէր. այն ժամանակը Թիմարլու ձիաւոր մանսուրէ զօրքերուն գունդերէն՝ չորրորդ գունդին տեղապահ Ապտիւլ Հալիմ պէկը որ նոյն քաղաքին մէջը պաշտօնատարութիւ կըլենար, իսկոյն զօրավարներով և զօրքերով հասեր և մեծ ջանք և աշխատութ ընելով, կըրակը ուրիշ տուներուն և մեծ շուկային չըհասած ողորմութեամբ յաւիտենականին մարեր է ։

Ասոր Սօֆիայի դատաւորի փոխանակ (նայիպը), Ինքնակալին հովանաւորութե նոյն տեղերուն շինվելուն, և ամեն յաջողութե մանսուրէ զօրքերուն հոն գըտնըվելնուն և անոնց ջանքովը կըրակը մարվելուն՝ ծանուցանող շնորհակալութէ յայտարարութիւնը՝ թագաւորեալ քաղաքը ուղարկեց ։

Թէպէտ յիրաւի երկնի և երկրի վրայ եղած բոլոր նշանները և գիտվածները միայն Ա̃յ կամքէն կախեալ է. սակայն Ա̃ծ ալ մարդկանց խոհեմութ պարգեւած ըլլալով, յայտնի պահպանողական պատճառներուն պատրաստութ ալ գործ ածելը հարկ է ։

Անոր համար յիշեալ քաղաքը թուլումպամը խըրկվիլը՝ մեծարու Սէրասքէրը պատշաճ տեսնալով, փաշային դուռը յայտնեց. և անկէ Ինքնակալին ալ երբ իմացընելով հրաման խընդըրվեցաւ, բարերար Արքային հաճութեամբը՝ արքունի գանձարանին ծախքովը ամբողջ Թախըմով թուլումպայով խըրկըվեցաւ ։

—

Արքունի հեծեալ զօրքերուն երրորդ գունդին տեղապահ Արիֆ պէկը, և արքունի սալահօրներէն Նազիֆ աղայն որ իրենց զօրավարութէ անվայել գործքերու մէջ գըտնըվելնուն համար, Արիֆ պէկը Պօլշա տարան, և Նազիֆ աղայն Իզմեայու տարան աքսորված էին. այս անգամ ողորմած Ինքնակալին հրամանովը երկուքին ալ ազատութեանը զատ զատ հրովարտակնին խըրկըվեցաւ ։

—

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ։

Երկրորդ անգամ տաճկաց տըպված Լրոյ գրին մէջ յիշված կերպովը, ցամաքային Մուհէնտիսխանէին գլխաւոր խո-

Ճանքն՝ հաճի համբըլ Խոսհայ էֆէնտիին աշխատասիրութը բովանդակած փիլիսոփայութեն գրքին՝ երրորդ հատորին ալ այժմ ապրուտի Վարժարանին մէջ տպվելու վրայ է. և նոյն էֆէնտիին շարադրած աշխարհագրութեան անտրակին ալ՝ 20 ղրշ ծախվի պիտի։

## ԳՈՐԾՆԱԿ. ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

*Պոլսոյ բոլոր ցուլին դէմ պահպանողական նախապատրաստութիւններուն գործածութիւն՝ ամէն մէկ սովորածվելու մօտ, յառաջադէմ Փրանսայի տէրութենէ կարգված, Փարիզէ և Լոնտրայ և Տէհէնաթ և Լէռօ և Ժօզ և Շէվալիէ և Լէֆրան և Հարիդ անուններով՝ վարպետ և երևելի բժիշկներուն պարզ և գիտուն երդմնական գաղղիերէն գրած գործածութիւններուն՝ հասարակաց օգտին համար խիկ թարգմանեցյաւ։*

---

Պոլսոյ ցաւը՝ սաստիկ ցաւերուն մէկն է. սակայն հասարակութե վախնալուն չափ վտանգաւոր չէ. և վախցնելուն պատճառը մոռցնելէն աւելի եղէր է։ Զգալի և խոր-վել հիվանդութ և սոսկալի հիւանդ բոլորվել հիվանդութ ցաւերուն մոռցնելու պատճառը շիօղ ցաւերուն մոռցնելու պատճառը՝ Պոլսոյ ցաւին համեմատելով, անոնցը խիստ շատ է.

Սասն զի Պոլսոյ ցաւը թէև Եւրոպայի կողմերը տարածվեցաւ, հաւաստապէս նայելով 75 հոգիի մէջէն միայն մէկ մարդուն ըլլըշած է. և քանիմը քաղաքներու մէջ 200 հոգիէն մէկ մարդու պատահած է. և մինչև հիմա այս չափէն աւելի եղած չէ։

---

Պոլսոյ ցաւէն պահպանվելու համար.

Նախ ամէն մարդ Պոլսոյ ցաւին քէչ վտանգաւոր ըլլալը մտածելով, ամուր սրտով և խաղաղ մտքով զինքը պահպանելու գործքերը կատարել պէտք է. Նոյնպէս մարդումը որքան որ սիրտը ամուր և վախը քիչ է, այնքան աւաւել այն ցաւերէն ապահով կըլլայ. քանզի միայն սրտին համարձակ կացուցը նախապատրաստութե մեծ մասն է.

Սասն որոյ բարկանալէն և տրտմելէն, կամ թէ շարունակ զուարճութի և արբեցուէ ընելէն, և ուրիշ ասոնց նման՝ մարդու անձին տաքուէն պատճառաւ բաներէն ետ կենալ պէտք է։

Երկրորդ՝ բնակարանին որքան որ օդը առողջ է, այնքան աւաւել նոյն ցաւը խոմէ հեռանալը փորձըված է. Այս պէտք է որ նստելու տունը և բնակարանը մաքուր պահվի. և քանիմը մարդ մէկ սենեակի մէջ չըպառկին. և ամէն առաւօտ, և կամ օրվան մէջը սենեակին պատուհանները բանան որ օդափոխութի ըլլայ. և չոր կիրէն (քիրեճէն) շինված խլօտեւլու լուված ջուրը լեցուն անօթովմը՝ օդը մաքրելու համար նստած սենեակներուն մէջը պահէն.

Սերջապէս վաւարանին (օճախին) մէջը քանիմը րոպէի չափ շատկեկ բոցով կըրակ վառէն որ անով օդը նորոգվի. նաև պաղ առնելէն և մսելէն զգոյշ կենան. և մինչև ցըեռս չըհագած և գօտի չըկապած՝ սենեակին դուռը և պատուհանները չըբանան. և եթէ կարելի է հագվելու համար՝ չոր կողմը գոց պահպանված սենեակմը երթան. և պառկելու սենեակներուն մէջը տանից վարագուրի մահիճ գործածեն. և նըրապված տուներուն խոնավութիւնը որ մեզա առողջուէ վնասակար է, այս Պոլսոյ ցաւին ոխրած ժամանակը՝ ևս աւաւել վնասակար կըլլայ.

Սուտի նըստելու և ննջելու պառկելու սենեակներու մէջը լոլոցված լաթ ամենևին չըչորցունեն. և միայն պառկած սենեակներուն օդը մաքրելը բաւական չը համարելով, բովանդակ տունը և անոր կից բնակարանները ալ մաքուր պահէն, և պատուհանն բանալով օդափոխութի ընեն. և կամ թէ գոնէ օրը անգամմը ջրով սրբել տան։ Նոյն բուսցարաններուն (ապտեսխաններուն) մէջը եղած արձիճէ թափված խողովակներուն (պօրուներուն) և արտաքնոցներուն և ծորակներուն (մուսլուխներուն) ջուրը վազած ծակերը մոխրամոմը (թափաղոմը) լաւ գոցեն, և պէտք չըլլալու ատենը բաց չըթողուն. և տուներուն

աղտեղի վազած ջուրի ճամբաները աղէկ մաքրէն . և տուներուն ճամբը գտնէ չա-փաւոր անդամներ սրբէն , որ լղոլներս թա-փանցել մէջը մարդոյ առողջութե չափ ունի :

Նաև անասուններուն աղբի և քակորի և ոսկորներուն կոյտը կանաչեղէններուն ալ լուծը աւելի գարշահոտութ բան ըլլալով , օրըստօրէ վերցընել տան . նաև հաւ , և ա-ղաւնի , և ասոնց նման կենդանի և թըռ-չունները` օդ չառներու նեղ տեղեր չը-պահէն . և այն տեղերը` մանաւանդ բաղ-մութիւն եղած տեղերը` յիշեալ հակառակ պատրաստութիւներ ՚ի գործ դնէն : Նաև բո-լոր ճամբաները` մանաւանդ նեղ ճամբա-ները` առտուներուն ամէն մէկը դատ դատ աշխատելով մաքրէն :

Երրորդ` Կօլէրա ցաւին մտադրութե նայօղները խմիչքներէն որ մըտնելը , և պաղ առնելը , նոյն ցաւին խէր հրաւիրօղն կըլ-լայ . և տաքցընօղ հանդերձը հագնելով , մանաւանդ փորը և ոտքերը տաք պահելը նոյն ախտը կխափանէ :

Աւստի բուրդէն կամ թէ ֆանելայէն գօտիներ մէջի փորը ամուր փաթթելով կապէն . և բուրդէ չօրայ գործածէն . և այս հագուստը եթէ խոնաւ ըլլայ` կամ աղտոտի , պէտք է որ փոխվի , և լուացվի :

Նաև ոտքերը սաւալ սանգայ տաք ջրով լըւալէն յետոյ` ցուրտ և խոնաւ տեղեր մէրկ ոտքով չըշըրջին , միշտ մաքուր և տաք պահէն , թէ անկողին պառկած` և թէ ե-լած ատեններն . վն զի խիստ վնասակար է , մանաւանդ Կօլէրա ցաւին տիրած ժա-մանակը :

Նմանապէս մըրսելէն փախչելու հա-մար` նաև ամառն ալ բաց պատուհաննե-րով չըննջէն , և սենեակները չափաւոր տաք պահէն . քանզի աւելի տաք սենեակներու մէջ բնակօղ մարդիկ` երբ դուրս կելլան , ցուրտը դիւրին կերպով կրնայ իրենց թա-փանցել . այս պատճառով` ամէն մարդ որ-քան կարելի է , կանուխ իրենց տունը դառ-նայ . և գիշերվան մէկ ժամանակը` մանաւանդ օդը ցուրտ և խոնաւ ըլլայ բաղմութի և սըր-ճատունց եղած տեղերէն անցնիլ պէտք չէ .

Չորրորդ` խնջոյքները չափէ դուրս հաչ-նեցընելէն որքան կարելի է զգուշանան . Թէև գործածվի ժամանակ անցընելը` Կօ-լէրա ցաւին վախէն յառաջ եկած սրտի անհանգստութիւն կըվերցընէ : Խորհելու միտք տանջել` և այն պատճառով գիշերվան քունէն զրկվիլ մեծ` աւելներին արժան չէ :

Հինգերորդ` բուրդէ չօրայ և գօտի գործածելուն օգուտը վերը թէև յիշե-ցաւ . սակայն նոյն հագուստները մաքուր բռնելու ջանք ընել հարկ է : Վասնզի մաք-րութիւ մեծ առողջութե պատճառ է . և չա-փաւոր տաք ջուրի մէջ մտնալու կարողութի ունեցօղները` ժամանակ ժամանակ թող գործածեն . սակայն անձերնին լուանալէն յետոյ` աւելի ջուրին մէջը չըմնան , և ան-ձերնին տաք խաւլըներով լաւ սրբէն և չորցնեն , և մինչև քրտինքնին չանցնի , սենեակէն դուրս չելլան . և այս գործա-ծութիւ եթէ ցրտացընօղ եղանակները ըլ-լայ , խիստ օգտակար է :

Նաև շըփելն ալ մեծ օգուտ ունի որ շատ անգամ փորձըված է . և ամէն օր ա-ռաւօտեան երեկոյեան ատենները կոկաւ-չուխայով կամ թէ քեչէով , և կամ սօֆ կամ ֆանելայէ կըտորով` մէկ ժամու քառորդի (չէյրէկի) չափ , բոլոր մարմինը շըփեն , կամ շըփել տան : Նմանապէս հագուստ հագ-նելն ալ թեթևցընել ժամանակին յարմարել հարկ է . սակայն մէկ պատճառաւ խիստ թեթևցընելն ալ արժան չէ :

Վեցերորդ` այս ցաւը մէկ քաղաքին մէջ տիրելու ժամանակը , ուտելիքը և ըմ-պելիքը չափաւորել պէտք է : Վն զի այս ցաւը շատ մարդու աւելի կերակուր ու-տելէն յետոյ` պատահած է . և արբեցութիւ սովորութի ըրօղ գինով մարդիկները ու-րիշներուն հետ համեմատելին , այս ախտին աւելի ընդունակութի ունենալնին շատ անգամ փորձըված է .

Աւստի խիստ դէզ և պարարտ չըլլալով` աղէկ եփած և կամ կարմրցած խորոված-ներ , և գիւղականքս (թազէ ցուկ) , և հաւ-կիթ , և եփուն հացի պէս թեթև բաներ ուտելու է . և աղի չոր միս և ձուկ և ասոնց նման բաներ , և ծծմորտանքս ծանր և պարարտ խմորեղէն ուտելու չէ , և ջրային

հունդերէն՝ վարունգ (խյար) և հաղար (մառուլ) և այսր նման ցրտունի և քամի ունեցող կանանչեղէններ, և ամէն կերպ սալաթներ, և հինտիպակի պէս հում կանանչեղէններ, և թէթև եէր էլմասիի պէս ցրտունի և քամի քիչ ունեցող բարեխառն կանանչեղէններ միշտ գործածելու է։

Նաև հունդերէն ալ՝ ասոնց պէսը ուտելու է, չոր ֆասուլեայ, և ոսպ, և պէղպէլեայ, և բախլայէն միայն քամուքը (սիւզմէն) գործածելու է։ Աման զի այսր կեղևը, թէ չորը և թէ թացը՝ սնուցանելու բնաւ օգուտ չըլլալէն ՚ի զատ, դժվար կըմարսուին, և ստամոքսի (միտէի) կըվնասէ։

Նաև թարմադին պտուղները իրենց ժամանակին եթէ լաւ հասուն չըլլան, աւելի վնասակար են։ Նաւ լաւ հասած եփած պտուղներն ալ թեպէտ ասոնց պէս վնասակար չեն. սակայն շատ ուտելու չէ. և կերակուրի սկիզբը ուտելն ալ զգուշանալու է։ Պանիր ուտելիքներ կան՝ որ մարդուն առողջութիւը պահպանող են, սակայն շատին ստամոքսին չը յարմարելով՝ այն ուտելիքները դժվար կըմարսուին։

Վերջապէս ամէն մարդ իր ստամոքսը նայելով՝ ստամոքսը ընդունող բաները ուտէ. և քիչեալ ցաւերն տիրած ժամանակը, թեթև կերակուրներէն օրը մէկ անգամ աւելի ուտելը վնաս չունի. սակայն միանգամայն կերված կերակուրին չափը՝ սովորութեէն միշտ քիչ ըլլալ հարկ է։

Ըմպելու վրայ ալ շատ բարակ նայիլ պէտք է. անձին տաքուէ առնը խմնված՝ ամէն մէկ պաղ ըմպելիքը խիստ վնասակար են, մանաւանդ քրտնած ժամանակը ցուրտ բան խմելը ամէնևին պատշաճ չէ։ Նաև անձին տաքութիւը որքան շատ ըլլայ՝ նոյն տաքութիւը անցնելու համար գործածված ըմպելիքները որքան ցուրտ ըլլան, այնքան աւաւել վնասակար են։

Նաև խմելու ջուրը խիստ պարզ և պայծառ ըլլալուն նայելու է, մինչ զի սիւզկիւէն անցած ջուրը ամէն ջուրէն ընտիր կըլլայ. և խմելու ջուրին քիչմը քացախ խառնելով, անոր բնութէը սաստկութիւնը առնլ հարկաւոր է։

Նաև սոսկ ջուր խմելու ժամանակը մանաւանդ օդին տաքուէն անձին քրտինք և ծարաւութի գալով՝ տեղը տեղը ջուր խըմելը հարկ եղած՝ հողագործութ պէս անձին աշխատութի տրվող մէկ գործին մէջ եթէ աշխատիլ պէտք ըլլայ, 300 տրրէմի չափ ջուրին մէջը մէկ փոքր անուշի դըգալով լեցուն քացախ խառնել, և ամէն խմելու առենը քիչ խմել պէտք է։

Վերջապէս աղէկ նանէ և փափաեայի ծաղիկի պէս, և այսր նման ուրիշ ազգու և հոտաւէտ խոտերը՝ մանկական չայի պէս սասանիկ եռացեալ ջուրին մէջը դնեն և խաշեն. և նոյն խաշած ջուրը կամ թէ անուշահոտ բան խառնըված ջուրը գործածելը՝ խիստ յարմար է. և երկու երեք մատով բռնելու չափ՝ նանէ կամ թէ մէկ գըլուխ փափաթեայի ծաղիկ 150 տրրէմի չափ եռացեալ ջուրին մէջը դնեն, և երբ ջուրը պաղի, 150 տրրէմի չափ ամենևին չեռացեալ պաղ ջուր ալ մէջը խառնըվի, և այն ժամանակը քիչեալ շուռուպի նման կըլլայ։

Ջուրը կրակին վրայ քանի որ եռայ, բնական ունեցած առողջարար զօրութիը մէկ մասը կըկորսուի, և եռալէն յետոյ մնացած ջուրը խիստ ծանր և դըժվարամարս ըլլալով, եռացած ջուրը նախայիշեալ խոտերուն ջուրին հետ խառնելը անպատշաճ է։